ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

17 ապրիլի 2023թ. N 18 - L

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 30-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասի, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի N 202-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի N 1063-Լ որոշման և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 30-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանով հաստատված Պետական գույքի կառավարման կոմիտեի կառուցվածքում՝

ա. Պետական գույքի տնօրինման վարչությունից առանձնացման եղանակով ստեղծել Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչություն,

բ. Պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժինը միացնել Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչությանը,

2) հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

44-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 44.1-րդ, 44.2-րդ, 44.3-րդ, 44.4-րդ և 44.5-րդ ենթակետերը.

«44.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված դեպքերում և կարգով որոշում է կայացնում Կառավարության որոշմամբ սահմանված արժեքով պետական

սեփականություն համարվող շարժական գույքը հետ վերցնելու և այլ մարմիններին ամրացնելու կամ հանձնելու մասին.

44.2) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կարգի համաձայն իրականացնում է պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկումներ.

44.3) որոշում և հաստատում է պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մշտադիտարկման տարեկան ծրագիրը.

44.4) անշարժ գույքի մշտադիտարկման արդյունքների ամփոփման հիման վրա ներկայացնում է առաջարկություններ անշարժ գույքի օգտագործման բարելավման վերաբերյալ.

44.5) անշարժ գույքի մշտադիտարկման արդյունքների ամփոփման հիման վրա իրականացնում է գույքի պետական հաշվառման արդյունքում ստացված տեղեկությունների, պետական գույքի էլեկտրոնային հաշվառման բազայի, ինչպես նաև կառավարման ծրագրերում առկա տեղեկատվությունների համեմատություն և շտկում.».

3) հրամանով հաստատված հավելվածի 5-րդ բաժնի 25-րդ կետում

ա. 4-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

բ. լրացնել նոր 5-րդ ենթակետով.

«5. պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչություն:»:

4/13/2023

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան